ԱԳՐՈ Լրատու

ՄԱՐՏ 4 - 15 2016 Թ. ԹԻՎ 5 (2093) ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ջերմոցային տնտեսությունների կառուցում և ինտենսիվ այգիների հիմնում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է իսպանական «Գլոբալ դեզառոլոս և ինժեներիա» բաժնետիրական ընկերության փոխնախագահներ Մանուել Վալդեսին և Անտոնիո Լուկեին՝ գյուղատնտեսության ոլորտում փոխըմբռնման հուշագրով նախատեսվող համատեղ ծրագրերը քննարկելու նպատակով:

Հուշագրի շրջանակներում, որը ստորագրվել էր 2015 թվականի հունվարին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Գլոբալ դեզառոլոս և ինժեներիա» ընկերության միջև, կազմակերպությունը ձեռնամուխ է եղել Հայաստանում կառուցել 5 հա ջերմոցային տնտեսություն, իսկ հարակից տարածքում՝ հիմնել ինտենսիվ այգիներ: «Ջերմոցային տնտեսությունների կառուցումն ու ինտենսիվ այգիների հիմնումը մեր երկրի գյուղատնտեսության գերակա խնդիրներից են, և համոզված եմ, որ Ձեր ընկերության հաջող փորձն արտասահմանյան այլ ընկերություններին վառ օրինակ կծառայի Հայաստանում հաստատվելու և ակտիվ գործունեության ծավալելու համար»,- ողջունելով հյուրերին՝ նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով մեր երկրում հիմնվող ինտենսիվ այգիների պահպանման համար ոռոգման նորագույն տեխնոլոգիաների ներդրման և հակակարկտային պաշտպանիչ ցանցերի կարևորությանը՝ նախարարն առաջարկել է տեղում կազմակերպել հակակարկտային և ոռոգման համակարգերի արտադրությունը, ինչը թույլ կտա նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը և արտադրվող պաշտպանիչ միջոցներն արտահանել Եվրասիական տնտեսական միության երկրներ, որտեղ նույնպես նորագույն տեխնոլոգիաների ներդրման պահանջարկ կա:

⇨ 2

Քննարկվել են գյուղատնտեսական վարկերի տրամադրման հարցերը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այսօր ընդունել է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանին՝ գյուղացիական տնտեսությունների վարկավորման հետ կապված ընթացիկ խնդիրները քննարկելու նպատակով:

Հանդիպման ընթացքում Հակոբ Անդրեասյանը տեղեկացրել է, որ այսուհետ բանկը պատրաստ է սկսել սուբսիդավորվող վարկերի տրամադրումը գյուղացիական տնտեսություններին՝ 2016 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու նպատակով: «Քանի որ այս տարի գարնան գյուղատնտեսական աշխատանքները մոտ մեկ ամիս վաղ են մեկնարկել, ուստի ՀՀ Կառավարությունը քայլեր է ձեռնարկել, որպեսզի գյուղացիական տնտեսություններին վարկերը ևս ավելի վաղ տրամադրվեն: Սուբսիդավորվող վարկերի տրամադրման պետական ծրագիրը, որի շրջանակում տրամադրվում են մատչելի տոկոսադրույքներով՝ փաստացի 8 տոկոսով դրամային վարկեր, կարևոր աջակցություն է գյուղացիական տնտեսությունների համար:

Մեր երկրի գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղիներից մեկն էլ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումն է, որոնց գործունեության խթանման համար սուբսիդավորվող վարկերի տրամադրումից զատ, մեծ դերակատարում կարող է ունենալ նաև առավել արտոնյալ պայմաններով վարկավորման իրականացումը»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Բանկի գործադիր տնօրենը ողջունել է այդ առաջարկը և նշել, որ Հայաստանում, կոոպերատիվների շարժմանն աջակցելու նպատակով, իրենք պատրաստ են առավել մատչելի տոկոսադրույքով վարկեր տրամադրել, ինչպես նաև հավելել է, որ կարող են նաև փորձի փոխանակման ծրագրեր իրականացնել հայկական կոոպերատիվների համար՝ առավել փորձառու ղեկավարներին գործուղել Ֆրանսիա կամ այնտեղից մասնագետներ հրավիրել Հայաստան՝ տեղում խորհրդակցություններ անցկացնելու համար: Բանկի տնօրենը հավաստիացրել է, որ վարկերը գյուղացիական տնտեսություններին կտրամադրեն ժամանակին և կցուցաբերվի անհատական մոտեցում:

Առաջիկայում ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ միջև նախատեսվում է ստորագրել համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Գործադիրը փոփոխություն է կատարել նախկինում ընդունած որոշումներից մեկում՝ գյուղատնտեսության ոլորտին տոկոսադրույքի սուբսիդավորմամբ վարկերի տրամադրման շարունակականությունը 2016թ. ընթացքում ապահովելու նպատակով: Ըստ հիմնավորման՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի շրջանակում, 2011-2015 թթ. տնտեսավարողներին տրամադրվել է 84.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով մատչելի (14 տոկոսով) վարկեր: Շահառուների թիվը կազմել է շուրջ 98.9 հազար միավոր: Վարկերն իրենց դրական ազդեցությունն են ունեցել գարնանացանի պատշաճ կազմակերպման, ագրոտեխնիկական և այլ միջոցառումների, ինչպես նաև բերքահավաքի աշխատանքների ժամանակին և կազմակերպված իրականացման գործում:

***

Գյուղատնտեսությունում վերջին տարիներին գրանցված տնտեսական աճը պայմանավորված է նաև ոլորտին տրամադրված մատչելի վարկերով: Որոշմամբ՝ տոկոսադրույքի սուբսիդավորմամբ վարկերի տրամադրման ժամկետը 2016թ. համար սահմանվել է մարտի 1-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը:

***

Կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում, համաձայն որի՝ գյուղատնտեսության նախարարությանը թույլատրվելու է կազմակերպել առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ: Այն հնարավորություն կընձեռի արագ ձեռք բերել պատվաստանյութեր՝ հանրապետության տարածքում ստեղծելով կայուն անասնահամաճարակային իրավիճակ:

***

Կառավարությունն ընդունել է «Երևան Ձուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը, վարձակալության հանձնելու գործընթացի շրջանակում անցկացված նախաորակավորման ընթացակարգի արդյունքներին և գնման ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերին հավանություն տալու և նախաորակավորված մասնակիցների ցանկը հաստատելու մասին» որոշում:

Նախաորակավորման հայտ է ներկայացրել 4 ընկերություն: Ակնկալվում է՝ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի հետագա զարգացում, սպառողներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում: Ըստ հիմնավորման՝ ներկայում Հայաստանում գործում է 5 ջրամատակարար ընկերություն. ծառայությունները տարբեր տարածքներում իրականացվում են տարբեր սակագներով, տարբեր պայմաններով: Հանրապետության շուրջ 560 համայնք դուրս է մնացել ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքներից:

Կառավարության նախկինում՝ 2014թ. ընդունված համապատասխան որոշումներով սահմանվել է, որ ներկայիս ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից պետք է անցում կատարվի միասնական սակագնով, մեկ վարձակալ ընկերության միջոցով ջրամատակարարման և ջրահեռացման: 2015թ. հոկտեմբերի 15-ի համապատասխան որոշմամբ էլ սահմանվել են նաև վարձակալի ընտրության մրցույթի կազմակերպման գործողություններն ու պատասխանատուները:

Մրցույթի արդյունքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները, վարձակալության հիմունքով, 15 տարի ժամկետով տրվելու են նոր վարձակալին:

Կոոպերացիա Էջ 4

Ժամանակակից ջերմատնային տեխնոլոգիա Էջ 5

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ջերմոցային տնտեսությունների կառուցում և ինտենսիվ այգիների հիմնում

1

Հյուրերն այս առիթով նաև հավելել են, որ այժմ բանակցություններ են ընթանում իսպանական առևտրային բանկերի հետ՝ ցածր տոկոսադրույքներով և երկարաժամկետ վարկեր ձեռք բերելու նպատակով, նախատեսվող ծրագրերը ֆինանսավորելու համար:

Հաշվի առնելով Իսպանիայի հարուստ փորձը, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և զարգացման գործում՝ ընկերության փոխնախագահ Մանուել Վալդեսն իր հերթին առաջարկել է այս ոլորտը նույնպես ներառել երկկողմ համագործակցության շրջանակում: Այս համատեքստում նա մասնավորապես առաջարկել է, փորձի փոխանակման նպատակով, կազմակերպել համատեղ ուսումնական այցեր: Ողջունելով այս առաջարկը՝ նախարարը վստահություն է հայտնել, որ նման փոխայցելությունները կլինեն արդյունավետ և փոխշահավետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր ևս:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտել մթերված խաղողի դիմաց վճարումների կատարումը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հրավիրել էր խորհրդակցություն՝ խաղող վերամշակող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպման նպատակն էր՝ նախորդ տարի մթերված խաղողի դիմաց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ առկա պարտավորությունների կատարման, պատրաստի արտադրանքի իրացման, 2016 թվականի մթերման ծրագրերի և ոլորտում առկա խնդիրների քննարկումը: «Նախորդ տարի լուրջ խնդիրներ առաջացան մթերումների հետ կապված, և մենք պետք է ջանքեր գործադրենք այս տարի դրանցից խուսափելու համար՝ առաջին հերթին վերամշակող ընկերությունների և գյուղացիական տնտեսությունների միջև պայմանագրերի կնքման միջոցով, ինչը թույլ կտա հստակեցնել կողմերի պարտավորությունները, մասնավորապես՝ վճարումների պայմաններն ու ժամկետները», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով նախորդ տարում խաղողի մթերումների հարցում ծագած խնդիրներին՝ նախարարը նշել է, որ կառավարությունը, հաշվի առնելով, որ ընկերությունները շրջանառու միջոցների խնդիրներ ունեին, նրանց մատչելի վարկեր տրամադրեց: Մի շարք ընկերություններ օգտվեցին այդ հնարավորությունից, և այժմ էլ պետությունը պատրաստ է օժանդակել բոլոր այն ընկերություններին, որոնք համապատասխան գրավի առարկա կարող են ներկայացնել:

Ընդգծելով, որ այժմ առաջնահերթ է վճարումների իրականացման հարցը՝ հատկապես հաշվի առնելով այս տարի գարնան գյուղատնտեսական աշխատանքների սովորականից ավելի վաղ սկսվելու հանգամանքը, նախարարը հորդորել է վերամշակող ընկերություններին մինչև ապրիլի 1-ը ավարտին հասցնել մթերված խաղողի դիմաց գյուղացիական տնտեսություններին վճարումների կատարումը:

Խորհրդակցության ընթացքում ներկայացվել են նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի փետրվար ամսին Հնդկաստան կատարած այցի արդյունքները: Խորհրդակցության մասնակիցներին տրամադրվել են հայկական արտադրանքի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերած հնդկական ընկերությունների տվյալները՝ գործարար կապեր հաստատելու և հայկական կոնյակն ու գինին Հնդկաստանի շուկա արտահանելու հնարավորությունների շուրջ բանակցություններ սկսելու նպատակով:

Նախարարը նշել է, որ այս տարվա ընթացքում որոշ հնդկական ընկերություններ նախատեսում են այցելել Հայաստան. նախարարությունը կնախաձեռնի նաև հայկական ընկերությունների հետ գործարար հանդիպումների կազմակերպումը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև խաղողագործության և գինեգործության ոլորտին առնչվող մի շարք այլ հարցեր ևս:

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Ընդլայնել համատեղ գործունեության շրջանակը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է CARD հիմնադրամ: Տնօրեն Գագիկ Սարդարյանի ուղեկցությամբ, նախարարը շրջել է հիմնադրամում, ծանոթացել բաժինների ընթացիկ աշխատանքներին, զրուցել աշխատակիցների հետ, պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

Շրջայցից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարության և CARD հիմնադրամի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որը միտված է ընդլայնելու համատեղ գործունեության շրջանակը գյուղատնտեսության ոլորտում, այդ թվում՝ սննդամթերքի անվտանգությանը և գյուղական համայնքների համաչափ զարգացմանն աջակցելու նպատակով:

«CARD հիմնադրամը, որն արդեն երկար տարիներ մեր երկրում գործունեություն է ծավալում, իսկապես, զգալի աշխատանք է իրականացնում գյուղատնտեսության զարգացման գործում: Դուք մեր ամենակարևոր գործընկերներից եք, և կարծում եմ, այս բնագավառում հանդիսանում եք պետություն-մասնավոր հատված համագործակցության լավագույն օրինակը: Վստահ եմ, որ համագործակցության այս արդյունավետ փորձը, որն այսօր ամրագրեցինք նաև հուշագրի ստորագրությամբ, տարեցտարի կընդլայնվի և կամրապնդվի նոր հաջողված ծրագրերով ու նախաձեռնություններով»,- նշել է նախարար Ս. Կարապետյանը:

Նախարարը հավելել է նաև, որ արդեն իսկ քննարկվում են նոր լայնածավալ ծրագրերի իրականացման հնարավորությունները, մասնավորապես՝ անասնապահության ոլորտում՝ ուղղված կենդանիների մթերատվության բարձրացմանը, ինչպես նաև խորհրդատվական համակարգի զարգացման բնագավառում: Հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարդարյանն, իր հերթին, բարձր է գնահատել ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցության ներկա մակարդակը և շնորհակալություն հայտնել նախարարին այցելության, ինչպես նաև աշխատանքի ընթացքում մշտապես ցուցաբերվող մեծ օժանդակության և աջակցության համար:

Սերգո Կարապետյանը հանդիպում է ունեցել նաև կառավարման խորհրդի անդամների հետ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում բրուցելոզի վերահսկողությանը և կանխարգելմանը, ջերմոցային տնտեսությունների և խորհրդատվական համակարգի կատարելագործմանը, արհեստական սերմնավորմանն առնչվող հարցեր: Կողմերը մտքեր են փոխանակել նաև համագործակցության նոր հնարավորությունների և հեռանկարների շուրջ:

Հանդիպման ավարտին նախարարն այցելել է CARD-ի գրասենյակին կից գործող «GREEN DAY» մասնագիտացված օրգանական խանութ: Այն գործում է 2011 թվականի փետրվարից, այստեղ վաճառվում են հայկական, գերմանական, ավստրիական և ֆրանսիական արտադրության «բիո» մակնշմամբ ապրանքներ:

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Քննարկվել են կաթի մթերման գործընթացին առնչվող խնդիրները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հրավիրել էր խորհրդակցություն՝ կաթ վերամշակող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ոլորտի ընթացիկ խնդիրները քննարկելու նպատակով: Հանդիպմանը մասնակցում էր «Կաթնամթերք արտադրողների միության» նախագահ Խաչատուր Պողոսյանը:

«Գյուղատնտեսության զարգացումն առանց վերամշակող ճյուղի անհնար է պատկերացնել, սակայն այս ոլորտում՝ հատկապես մթերումների հետ կապված հարցերում դեռևս առկա են լուրջ խնդիրներ, որոնք անհապաղ լուծման կարիք ունեն»,- ասել է նախարար Սերգո Կարապետյանը: Այս համատեքստում նախարարն առաջին հերթին կարևորել է մթերման գործընթացի ճիշտ կազմակերպումը և համապատասխան հաշվարկների իրականացնելուց հետո, կաթի մթերման խելամիտ նվազագույն գնի սահմանումը, որը պետք է լինի շահավետ թե՛ մթերող կազմակերպությունների, և թե՛ տնտեսվարող սուբյեկտների համար: Միաժամանակ Սերգո Կարապետյանը ընդգծել է արտադրվող կաթնամթերքի՝ մասնավորապես պանրի տեսականու դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը, որը կարող է մեծ պահանջարկ ունենալ Եվրասիական տնտեսական միության շուկայում:

Անդրադառնալով մթերված կաթի դիմաց ֆերմերային տնտեսությունների նկատմամբ առկա պարտավորությունների կատարման խնդրին՝ նախարարը հորդորել է հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել մթերված ապրանքի դիմաց վճարումների իրականացումը: Տեղեկացնելով, որ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (CARMAC) ծրագրերի» շրջանակում, հանրապետությունում արդեն իսկ ձևավորվել է շուրջ 150 կոոպերատիվ՝ նախարարը շեշտել է, որ պետական աջակցության ծրագրերն այսուհետ ուղղվելու են կոոպերատիվների զարգացմանն ու ընդլայնմանը:

Այս համատեքստում նախարարն առաջարկել է վերամշակող ընկերություններին մթերումներն իրականացնելիս ակտիվորեն համագործակցել այդ կոոպերատիվների հետ՝ համապատասխան պայմանագրեր կնքելու միջոցով: Խորհրդակցության մասնակիցներին ներկայացվել է ընթացիկ տարվա կաթի մթերումների կազմակերպման նպատակով, կազմված օրինակելի պայմանագրերի ձևը, որով կամրագրվեն նաև կաթի մթերման գնի նվազագույն շեմը և վճարման ժամկետները: Պայմանագրի օրինակելի ձևն արդեն քննարկվել է մի շարք գերատեսչությունների հետ և առաջիկայում ներկայացվելու է ՀՀ կառավարության հաստատմանը:

Հանդիպմանը ներկա ընկերությունների ներկայացուցիչներն, իրենց հերթին, ներկայացրեցին իրենց հուզող խնդիրները՝ համոզմունք հայտնելով, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ ուժերով հնարավոր կլինի գտնել այդ հարցերի լուծման ուղիները:

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 4 - 15, 2016 թ.
թիվ 5 (2093)

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ԳԱՐՆԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

Կառավարությունում, վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը, Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը, Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, Քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանը, հանրապետության մարզպետները և տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են մարզերում նախատեսվող ենթակառուցվածքային զարգացման ծրագրերին, գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական աշխատանքներին, հակահեղեղային միջոցառումների իրականացմանը, սոցիալական ծառայությունների բարելավմանը վերաբերող մի շարք հարցեր:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ մարզպետարանների հետ իրականացված համակարգված աշխատանքների արդյունքում, նախորդ տարի գյուղոլորտում արձանագրվել է 11,7 տոկոս տնտեսական աճ, իսկ 2015 թվականին 2014-ի համեմատ, առաջին անգամ մշակվել է 19 հազար հա ավելի հողատարածք: Ներկա դրությամբ, մշակվող վարելահողերի ծավալը ՀՀ-ում կազմում է 79 տոկոս: Նախարարը զեկուցել է, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքներն արդեն իսկ սկսվել են Արարատյան դաշտավայրում, Արագածոտնի նախալեռնային գոտիներում, Կոտայքում, ինչին նպաստել են նաև բարենպաստ եղանակային պայմանները: Գարնանացան գարու սերմացուի 70 տոկոսը բաշխվել է գյուղացիական տնտեսություններին, ընթացքի մեջ է պետության սուբսիդավորմամբ գյուղացիներին հատկացվելիք պարարտանյութերի ներկրման գործընթացը, իսկ դիզվառելիքն արդեն տրամադրվել է: Վարչապետի հանձնարարությամբ սկսվել է նաև կառավարության կողմից 6 տոկոսով սուբսիդավորվող գյուղատնտեսական վարկերի տրամադրման գործընթացը՝ տարեկան 8 տոկոս տոկոսադրույքով: Նախարարն ընդգծել է, որ նախորդ տարվա խնդիրները բացառելու նպատակով արդեն իսկ սկսել են աշխատել վերամշակող կազմակերպությունների հետ՝ մթերումները պատշաճ կազմակերպելու համար:

Սերգո Կարապետյանը տեղեկացրել է, որ հանրապետությունում վերջին երկու ամիսներին արձանագրվել է պտուղ բանջարեղենի արտահանման ծավալների աճ. մարտի 12-ի դրությամբ արտահանվել է 17 հազար 800 տոննա պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7 հազար 300 տոննայի դիմաց:

Անդրադարձ է կատարվել ոռոգման սեզոնի բացման նախապատրաստական աշխատանքների ընթացքին: Զեկուցվել է, որ իրականացվում են համապատասխան քայլեր, որպեսզի բոլոր պոմպակայաններն, առանց որևէ, խնդրի պատրաստ լինեն սեզոնի մեկնարկին: Վարչապետ Աբրահամյանն ընդգծել է, որ այս հարցում որևէ խնդիր չպետք է լինի, և գյուղացին ոռոգման ջուրը պետք է ստանա ժամանակին:

Օրակարգային հաջորդ հարցով քննարկվել են Համաշխարհային բանկի «Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագրի» շրջանակներում համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող կենտրոնների կազմակերպման ուղղությամբ նախատեսվող աշխատանքներին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը նշել է, որ ՀԲ 2-րդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է հանրապետությունում ստեղծել ևս 37 տարածքային կենտրոն, որոնցից 20-ը պետք է շահագործման հանձնվի ընթացիկ տարվա ընթացքում: Ընդհանուր առմամբ, նման կենտրոնների թիվը ներկայիս 18-ից պետք է հասցվի 52-ի: Վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանին՝ մարզպետների հետ քննարկել կենտրոնների կառուցման համար անհրաժեշտ տարածքների հատկացման հարցը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ: Վարչապետն անդրադառնալով Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների աշխատանքին՝ ևս մեկ անգամ կարևորել է դրանց թափանցիկ և անաչառ գործունեությունը, միջոցները խիստ արդյունավետ օգտագործելու նպատակով: Կառավարության ղեկավարը համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին և մարզպետներին հանձնարարել է շարունակել հետևողական քայլերը՝ ՍԾՏԳ-ների գործունեությունն առավելագույնս թափանցիկ դարձնելու և խախտումները բացառելու նպատակով:

Այնուհետև քննարկվել են 2016 թ.-ի ընթացքում առաջնահերթ հակահեղեղային միջոցառումների իրականացմանը վերաբերող հարցեր: Նշվել է, որ այդ նպատակով ՀՀ պետբյուջեից հատկացվելու է շուրջ 680 մլն դրամ՝ Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար: Ծրագրով կիրականացվեն նաև Արաքս գետի ափամերձ հատվածների ամրացման աշխատանքներ:

www.gov.am

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

«Գյուղմթերքի կին հերոս-2016»

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը մասնակցել է «Գյուղմթերքի կին հերոս-2016» ազգային ամենամյա մրցանակաբաշխության արարողությանը: Միջոցառումը կազմակերպվել էր ՀՀ գյուղատնտեսության նախարարության ու ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի կողմից. այն անցկացվում է «Հարավային Կովկասում տարածաշրջանային պարենային անվտանգության բարելավում ազգային ռազմավարությունների և մանր ֆերմերային արտադրության միջոցով» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նախ շնորհավորել է կանանց տոնի առթիվ՝ մաղթելով առողջություն, երկար տարիների կյանք և հետագա հաջողություններ: «Գյուղատնտեսությունը մեր երկրի տնտեսության գերակա ոլորտներից է, որտեղ մեծ դերակատարություն ունեն նաև կանայք. Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի աշխատողների 50%-ից ավելին կանայք են, որոնք ներգրավված են ոլորտի բոլոր ճյուղերում: Հատկապես նրանց հոգատար աշխատանքով է պայմանավորված մեր հայրենական գյուղմթերքի բարձր համային և որակական հատկանիշները», – նշել է Սերգո Կարապետյանը:

Իր խոսքում անդրադառնալով նաև կոոպերատիվների դերին գյուղատնտեսության զարգացման և արտադրողականության բարձրացման գործում, նաև կոոպերատիվների դերին, նախարարը, հատկապես ընդգծել է կանանց կոոպերատիվների կարևորությունը, որոնք ունենալով փոքր հզորություններ՝ մեծ արդյունք են տալիս ոլորտում:

Նախարարի խոսքով՝ կոոպերատիվների շարժումը մեր երկրում նոր թափ է ստացել, այս պահին առկա են գործող 272 կոոպերատիվներ, որոնք արդյունավետ գործունեություն են ծավալում և կարևոր է, որպեսզի այդ արդյունքը տեսանելի լինի բոլորի համար, և նրանց փորձը կիրառելով՝ մյուս գյուղացիական տնտեսությունները նույնպես համոզվեն, որ կոոպերատիվներին անդամագրումը բերելու է եկամուտների ավելացման:

Մրցանակաբաշխությունը անց է կացվում՝ ի նշանավորումն գյուղատնտեսական արտադրության ու պարենային անվտանգության ոլորտում կանանց դերի և ձեռքբերումների՝ Կանանց միջազգային օրվա շրջանակներում:

Միջոցառման ընթացքում մթերքների արտադրության մեջ ներգրավված ավելի քան 40 կին ֆերմերներ ներկայացրել են իրենց արտադրանքը, կազմակերպվել է նաև ավանդական խոհանոցի ուտեստների համտես՝ պատրաստված Հայաստանի տարբեր մարզերի էկոլոգիապես մաքուր, համեղ ու առողջարար մթերքից: Միջոցառման մասնակիցների թվում էին նաև նախարարությունների, միջազգային և տեղական կազմակերպությունների, տարածաշրջանային և տեղական իշխանությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

«Գյուղմթերքի կին հերոս» մրցանակաբաշխությունն անց է կացվում 2011 թվականից: Միջոցառման նպատակն է՝ խթանել այն կանանց գործունեությունը, ովքեր գյուղատնտեսության ոլորտում հասել են դրական արդյունքների ու կարող են նպաստել համայնքների կայուն զարգացմանը, պարենային և սնուցման անվտանգությանը: Այս տարի մրցանակաբաշխությունն ընդգրկում է Հայաստանի բոլոր մարզերը:

Միջոցառման ավարտին լավագույն արտադրողներին նախարար Սերգո Կարապետյանը հանձնել է շնորհակալագրեր և խրախուսական նվերներ: Այնուհետև նախարարը շրջել է տաղավարներով, զրուցել մասնակիցների հետ:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

... ՈՐ ԳՅՈՒՂԸ ԱՄՈՒՐ ԼԻՆԻ

Գեղարքունիքի մարզի «Վահանի կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվը» ձևավորվել է 2001թ.-ին՝ ԱՄՆ գյուղդեպարտամենտի «Մարքեթինգի աջակցության ծրագրի» օժանդակությամբ: Սկսել են աշխատել 2000 թ.-ից: Սկզբնական փուլում կոոպերատիվն ունեցել է 33 անդամ, սակայն տարիների ընթացքում, նրանց թիվն ավելանալով՝ հասել է 120-ի:

Կոոպերատիվի նախագահ Իլյիչ Ղուլյանը նշեց, որ այն ստեղծվել է բնակիչների պահանջով: Վահան գյուղը գտնվում է բարձր լեռնային գոտում: Բնակչության ապրուստի հիմնական միջոցը գոյանում է անասնապահությունից: Այդ տարիներին դաշտավարությունը մղվեց երկրորդ պլան, քանի որ տեխնիկան հնամաշ էր, և հողի մշակության աշխատանքներն արդյունավետորեն չէին կատարվում: «Բնակչության հիմնական զբաղմունքը կարտոֆիլաբուծությունն էր, սակայն բերքատվությունը շեշտակիորեն իջավ և չկարողացանք շուկայում դիմանալ մրցակցությանը: Այդ պատճառով զբաղվածության հիմնական ուղղությունը դարձավ անասնապահությունը, կաթի և մսի արտադրությունը: Եվ, քանի որ 2001-2003 թթ.-ին կաթի մթերումը հիմնախնդիր էր, մեր կոոպերատիվի ստեղծումն, այս առումով, հույժ կարևոր էր: Այդպիսով, մենք մասնագիտական բարձր մակարդակով կազմակերպեցինք կաթի մթերման գործընթացը»,- պատմում է կոոպերատիվի նախագահը: Ֆերմերները կաթը հանձնում էին կոոպերատիվին, վերջինս էլ՝ վերամշակող ընկերություններին: Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով, GARD-ը կոոպերատիվին, 50% զեղչով, տրամադրեց կաթի սառեցման սառնարաններ, անալիզատոր: «Քանի որ կաթի մթերումն այլևս հիմնախնդիր չէր, անասնապահությունը լայն թափով սկսեց զարգանալ: Սակայն այդ տարիներին կաթի ինքնարժեքը բարձրացավ, քանի որ ավելացան անասնակերի կուտակման աշխատանքների վրա կատարվող ծախսերը, ինչը հիմնականում պայմանավորված էր դիզվառելիքի թանկացումով: Այդպիսով՝ թանկացան նաև ծառայությունների մատուցման ծախսերը: Մինչդեռ, կաթի մթերման գներն այնքան էլ բարձր չէին»,- նշում է կոոպերատիվի նախագահը: Անասնապահական ճյուղերի զարգացման ուղղությամբ, բնակիչների ոգևորությունն ավելացավ նաև վերջին մի քանի տարիներին, ինչն, ըստ Իլյիչ Ղուլյանի, պայմանավորված էր կաթի մթերման գների բարձրացմամբ: Նրա տեղեկացմամբ, կաթի մթերման գինն այս օրերին 130 դրամ է, և դա այն դեպքում, երբ խոտի մեկ հակն արժե 1000 դրամ: «Այսօր կոոպերատիվի գործունեությունն անհրաժեշտ է, սակայն կան մի քանի խնդիրներ, որոնք պետք է լուծումներ գտնեն»,- ասում է կոոպերատիվի նախագահը՝ կարևորելով կովերի արհեստական սերմնավորման գործընթացը, անասնակերի ստացման նպատակով բազմամյա խոտաբույսերի ցանքի կազմակերպումը, արոտավայրերի ջրարբիացման նպատակով խմոցների տեղադրումը:

Բարձր լեռնային գոտում գտնվող 1500 հա արոտավայրեր տանող ճանապարհները ենթակա են նորոգման: Կոոպերատիվի նախագահը նշեց, որ թվարկված հիմնախնդիրները հնարավոր չէ լուծել՝ առանց պետական աջակցության: Հարկ է նշել, որ այդ խնդիրների կարգավորման գործընթացում կբարձրանա կենդանիների մթերատվությունը, տնտեսության վարումը կդառնա արդյունավետ:

Ի.Ղուլյանը սիրով է հիշում այն ժամանակները, երբ GARD-ը, կոոպերատիվի զարգացման ծրագրի շրջանակներում, ստեղծեց պատանեկան ակումբ: Դպրոցահասակ երեխաները գիտելիքներ էին ստանում երինջների նպատակային աճեցման, կերակրման, պահվածքի ու խնամքի պայմանների վերաբերյալ: Կոոպերատիվի նախագահի կարծիքով, մասնագիտական գիտելիքների հարստացման կարիք կոոպերատիվի անդամներն այսօր ևս ունեն: Գյուղում առկա են 1500 գլուխ խոշոր, 1200 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, նման քանակի առկայության պարագայում առաջ է գալիս անասնաբուժական դեղատուն ունենալու անհրաժեշտությունը: Կոոպերատիվն ունի նաև վարող, ցանող, հնձող և հակավորող տեխնիկայի կարիք: «Սահմանամերձ

գյուղի բնակիչները նորագույն տեխնիկայի ձեռք բերման, ինչպես նաև սպասարկումների և ծառայությունների իրականացման գործընթացում պետական աջակցության կարիք ունեն, առանց որի հնարավոր չէ շոշափելի հաջողությունների հասնել: Գյուղացին ուզում է մնալ գյուղում, աշխատել, բարիքներ ստեղծել, սակայն դրա համար պետք է բավարար պայմաններ ստեղծվեն»,- հավելում է կոոպերատիվի նախագահը՝ կարևորելով նաև սուբսիդավորված վարկավորման հատկացումը:

Առանձնակի ուշադրության պետք է արժանանան նաև գյուղաբնակ երիտասարդները, ապագայի կրողները: «Նրանք պետք է աշխատանք ունենան, մշտական զբաղվածություն, ֆինանսավորման կայուն աղբյուր, որպեսզի հնարավորություն ունենան, առանց մտավախության, ամուսնանալ, ընտանիք կազմել, բարգավաճել, որ գյուղն ամուր լինի»,- իր խոսքը եզրափակում է Իլյիչ Ղուլյանը:

ՏԵՍԱԿԵՏ

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱՎՈՐՎԵՆ՝ ՀՈՂԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՈՎ

Հանրապետության վաստակավոր ինժեներ Սարգիս Հակոբյանի կարծիքով, մեր երկրում հնարավոր չէ զարգացնել գյուղատնտեսությունը՝ առանց հողերի խոշորացման: Խոշորացման արդյունքում շեշտակիորեն նվազում են հողերի մշակության, սպասարկման և ծառայությունների վրա կատարվող ծախսերը, այդպիսով տնտեսության վարումը դառնում է արդյունավետ:

«Իրավիճակը ճիշտ գնահատելու համար փորձենք օգտվել աշխարհի մի շարք երկրների փորձից, որոնք անցել են հողերի խոշորացման ճանապարհով: Գերմանիայում, օրինակ՝ հարյուր հեկտարից փոքր հողատարածքը մշակության համար համարվում է ոչ շահավետ, քանի որ չեն արդարացվում կտրտված հողակտորների վրա կատարվող ծախսերը: Հողերի խոշորացման ճանապարհով է անցել նաև Շվեդիան՝ ստեղծելով հողատարածքների մշակությամբ զբաղվող խոշոր կոոպերատիվներ: Դրա շնորհիվ, Շվեդիան, կարճ ժամանակահատվածում, ցորեն ներմուծող երկրից վերածվեց արտահանող երկրի»,- պատմում է Սարգիս Հակոբյանը: Նրա կարծիքով, արդյունավետ մշակության առաջին պայմանը՝ հողերի խոշորացումն է: «Կոոպերատիվները պետք է կազմավորվեն հողերի խոշորացման պայմանով: Միայն այդ դեպքում կարելի է զարգացնել գյուղատնտեսությունը: Իսկ հողը գրագետ օգտագործելու համար պետք է հաշվի առնել հողաշինարարության պահանջները»,- ասում է փորձառու մասնագետը: Ըստ Սարգիս Հակոբյանի՝ հողաշինարարը պետք է նախագծի հողատարածքները, այնուհետև կատարի տնտեսական հաշվարկ՝ կատարվող ծախսերի և սպասվելիք օգուտի վերաբերյալ: Այլ կերպ ասած, ըստ պրն. Հակոբյանի, գյուղատնտեսությունը պետք է զարգացնել՝ գիտական հենքի վրա:

«Խոսելով Հայաստանի հողային ֆոնդի մասին, պետք է փաստել, որ մեր երկրում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները 5.5 անգամ գերազանցում են Իսրայելի հողատարածքներին: Ինչ վերաբերում է խմելու և ոռոգման ջրերի քանակությանն, ապա համեմատության մեջ դնելով, դարձյալ պետք է փաստել, որ այն Իսրայելի ցուցանիշները գերազանցում է 8.5 անգամ: Մինչդեռ Իսրայելը, տարեկան 15 %-ով ապահովում է եվրոպական երկրների ցիտրուսային մրգերի պահանջարկը: Եվ դա այն դեպքում, երբ այդ երկիրը գտնվում է գյուղատնտեսության զարգացման համար անբարենպաստ գոտում (մշտական բնական աղետներ՝ տարվա բոլոր եղանակներին): Տնտեսական այդպիսի առաջընթացը ներդրված նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ կաթիլային ոռոգման արդյունքում է»,- նշում է մասնագետը: Նրա կարծիքով, Հայաստանում նույնպես պետք է բարձրացնել հողի մշակության մշակույթը՝ ներդնելով աշխարհի առաջավոր փորձը: Այդ դեպքում կոոպերատիվների ստեղծումը կտանի արդյունավետ տնտեսավարման, կձևավորվի կոոպերատիվների կազմավորման պահանջարկ:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 4 - 15, 2016 թ.
թիվ 5 (2093)

ՍԵՄԻՆԱՐ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

«Հայկական բերքի առաջմղման կենտրոնը» և «Ագրոտեխ» ՍՊԸ, «Ռիշել Գրուպի» հետ համատեղ, օրերս Երևանում անցկացրեցին սեմինար՝ «Ժամանակակից ջերմատնային տեխնոլոգիաները» թեմայով: Սեմինարին մասնակցում էին ոլորտի պետական պաշտոնատար անձինք, ուսումնական և գիտահետազոտական կառույցների աշխատակիցներ, խոշոր և փոքր ջերմատնային տնտեսությունների, բանկերի ներկայացուցչներ, ֆերմերներ, գյուղատնտեսներ, բույսերի պաշտպաններ, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի մանրածախ վաճառք իրականացնող անձինք:



Սեմինարին մասնակցում էր ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանը: «Այս համատեղ միջոցառման հիմնական նպատակն է՝ գյուղացիական տնտեսություններին, կոոպերատիվներին, գյուղատնտեսությամբ զբաղվող կազմակերպություններին ներկայացնել Հայաստանի բնակլիմայական պայմաններին հարմարեցված նոր տիպի ջերմատները, ինչպես նաև դրանցում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները, որոնք էականորեն կարող են ավելացնել արդյունավետությունն ու բարձրացնել արտադրողականությունը»,- ողջունելով մասնակիցներին՝ նշել է փոխնախարարը: Նա նաև հավելել է, որ սեմինարի մասնակից ֆրանսիական «Ռիշել Գրուպ» ընկերությունն արդեն իսկ Հայաստանում իրականացրել է աշխատանքներ՝ ջերմատնային տնտեսություններ կառուցելու ուղղությամբ: Հայկական բերքի առաջմղման կենտրոնի տնօրեն Ալեքսան Առաքելյանը ներկայացրեց «Ժամանակակից ջերմատնային տնտեսությունները Հայաստանում» թեման: «Հայաստանն արդեն ունի ժամանակակից ջերմատներ, սակայն մենք պետք է ուղղակի կապ հաստատենք մեր արտերկրյա գործընկերների հետ և ձեռք բերենք իրենց ներկայացրած լավագույն տեխնոլոգիաները: Պետք է աշխուժանան մասնագիտական փոխայցերը, որպեսզի մեր մասնագետները կարողանան կիրառել այն տեխնոլոգիաները, որոնք մենք ներմուծում ենք Հայաստան»,- ասաց պրն. Առաքելյանը: Կենտրոնի տնօրենը նաև համոզմունք է հայտնել, որ տեղական ջերմոցային տնտեսություններում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը կհանգեցնի ոչ միայն ծախսերի զգալի կրճատման և դրանից բխող ինքնարժեքի նվազմանը, այլև արտադրության և արտահանման ծավալների ավելացմանը:

Սեմինարի ընթացքում, մասնակիցներին ներկայացվեց տեղեկատվություն նոր սերնդի կիսափակ ջերմատների մասին, առանձնակի ուշադրության արժանացավ Հայաստանի կլիմային հարմարեցված ջերմատան մոդելը: «Ագրոտեխ» ՍՊԸ տնօրեն Նաիրա Խաչատրյանի զեկույցը վերաբերում էր «Կենսաբանական պաշտպանության միջոցները ժամանակակից ջերմատներում» թեմային՝ կարևորելով այդ եղանակի առավելությունները: «Ագրոտեխ» ընկերությունը համագործակցում է բնագավառում աշխարհի առաջատար արտադրողների հետ և Հայաստան է ներմուծում հանքային և օրգանական բարձրորակ պարարտանյութեր, միկրոտարրեր, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի կենսաբանական, քիմիական և մեխանիկական միջոցներ, բույսերի աճեցման օրգանական և հանքային սուբստրատներ, փոշոտող իշամեղուներ և այլն:

Կազմակերպիչների հրավերով համաշխարհային առաջատար արտադրողներ՝ ֆրանսիական Ռիշել Գրուպ, հոլանդական Էնզա Զադեն, Մարդենկրո Բի Վի Պրիվա, իսրայելյան Պասկալ Թեքնոլոջիս ընկերությունների ներկայացուցիչները սեմինարի մասնակիցներին ներկայացրեցին ուշագրավ թեմաներ՝ իրենց ընկերությունների գործունեության վերաբերյալ: Դրանք վեաբերում էին Նիդեռլանդներում ջերմատնային բիզնեսի նկարագրությանը, ջրալուծ պարարտանյութերի կիրառմանը, լոլիկի և վարունգի սնուցմանը: Ներկայացվեցին լոլիկի հատուկ սորտեր: Առանձնակի հետաքրքրությամբ լսվեց ջերմատան ավտոմատ կառավարման, բերքատվության վերահսկման համակարգերի վերաբերյալ զեկույցը: Անդրադարձ եղավ նաև բարձր ջերմատներում լոլիկի և վարունգի ամրացման համար կիսաավտոմատ սարքավորումների բնագավառում նորագույն մշակումներին, աշխատույժի ծախսերի խնայողությանը և արտադրողականության բարձրացմանը:

«Առանց նոր տեխնոլոգիաների ներդրման, Հայաստանում գյուղատնտեսությամբ զբաղվելը դառնում է անիմաստ: Այսպիսի սեմինարներն օգնում են հասկանալ, թե այս առումով ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում աշխարհում»,- նշում է ելակի թփերի և բերքի աճեցման գծով մասնագիտացված «Բերք» ՍՊԸ-ի (ք. Իջևան) սեփականատեր Միեր Խաչատրյանը: Ֆերմեր Սիմոն Ջամալյանն էլ կարևորեց գիտական գյուղատնտեսության վարումը, որպեսզի ճյուղը լինի արդյունավետ: Ըստ ֆերմերի՝ գյուղացին այսօր ունի տեղեկատվության, մասնագիտական գիտելիքների հարստացման կարիք, և այստեղ իր ուրույն անելիքն ունի հեռուստատեսությունը:

Սեմինարի ընթացքում կայացան լուրջ քննարկումներ, որոնց ընթացքում արվեցին մասնագիտական մի շարք եզրահանգումներ:

Քննարկումներ եղան նաև ջերմատներում կիրառվող այլ տեխնոլոգիաների վերաբերյալ, որոնց ներդրումը հնարավորություն կտա ապահովել բարձր բերքատվություն, միջազգային շուկաներում արտադրանքի մրցունակ գին և բարձր որակ:

Նելլի Սահակյան

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆՎԱԶԵՑՆԵԼ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ

Վերջերս տեղի ունեցավ «Փարիզյան համաձայնագրի վերաբերյալ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմ երկրների 21-րդ համաժողովում ընդունված որոշումը և իրականացման հեռանկարները» թեմայով Կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի հինգերորդ նիստը: Այն անցկացվեց ընդլայնված ձևաչափով՝ տարբեր ոլորտների ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Փարիզյան համաձայնագրի հիմքում դրված հիմնարար սկզբունքն այն է, որ ջերմոցային գազերի գլոբալ արտանետումները պետք է սահմանափակվեն այնպիսի մակարդակում, որ մթնոլորտի գլոբալ ջերմաստիճանը չգերազանցի 2 աստիճանը և, ավելին, ձգտի 1.5 աստիճան: Այդ գործընթացը բավականին բարդ է, և միայն համատեղ ուժերով կարող ենք դա ապահովել՝ պետական մարմինները, մասնավոր հատվածը, տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակությունը և, անշուշտ, միջազգային համագործակցության օգնությամբ», - նշել է ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանը:

Առաջնահերթ է այն, որ ոլորտներում պետք է իրականացնել ջերմոցային գազերի արտանետումների սահմանափակում և կրճատում: Ի պատասխան այս հարցի՝ ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը պատասխանել է. «Առաջին հերթին արտադրական ձեռնարկություններն են, բայց տարբերակում որպես այդպիսին, կարծում եմ, պետք չէ նշել, որովհետև մենք գնում ենք հիմնական խնդրի լուծման: Մենք պետք է կարողանանք խնդիրներն այնպես դնել, որպեսզի համաչափորեն նվազեցնենք ջերմոցային գազերի արտանետումները»:

Կլիմայի փոփոխության դեմ պայքարի նպատակով ստեղծվել է Կանաչ հիմնադրամ, որի նպատակն է՝ զարգացող երկրներին ցուցաբերել համապատասխան ֆինանսական, տեխնիկական և տեխնոլոգիական աջակցություն կլիմայի փոփոխության դեմ մղվող պայքարում: «Մենք հնարավորություն կունենանք օգտվել այդ հիմնադրամից և մեր տնտեսությունը զարգացնել ավելի արդի տեխնոլոգիաներով: Այսօր արդեն այդ ուղղությամբ իրականացնում ենք քայլեր»:

Նիստի ժամանակ զեկույցով հանդես եկան ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ազգային համակարգող Արամ Գաբրիելյանը, ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանը և Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի հիմնադիր նախագահ Մուշեղ Թումասյանը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Արևաբույր՝ ժողովրդի հետ մեջք-մեջքի

Արարատի մարզի Արևաբույր գյուղի առաջին բնակիչները եկել են Ախալքալակից, Աշտարակի Կարբի գյուղից, Կոտայքի ու Մարտունու շրջաններից: Նախկինում գուղը կոչվել է Խառատլու: 2002թ. Արևաբույրի գյուղապետ ընտրված, երկրապահ Մարտին Ավետիսյանը լինելով երկրապահ անդամ, մասնակցել է ազգային ազատագրական պայքարին և պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով: Կրթությունը ստացել է նախ Ավտոճանապարհային տեխնիկումում, ապա՝ Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտում, աշխատել է գյուղատնտեսության ոլորտում՝ 1989 թ. կոլտնտեսության նախագահ, 1997-1998 թթ. գյուղապետի տեղակալ, այնուհետև՝ գյուղապետ:

-Պարոն Ավետիսյան, գյուղատնտեսական նշանակության հողերը քանի՞ հա է կազմում համայնքում:

- Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 300 հա, որից 120 հա վարելահող է, մնացածը՝ տարբեր որակի՝ 98 հա սեփականաշնորհվել է, 54 հա՝ տնամերձ, 29 հա վարձակալության պահուստային ֆոնդ է: Բնակչության հիմնական մասը ներկայումս զբաղվում է բանջարաբուծությամբ, իրենց տնամերձերի մշակմամբ և արտագնա աշխատանքով: Քաղաքին մոտ գտնվելու հանգամանքը նպաստում է, որ երիտասարդների հիմնական մասն աշխատի մայրաքաղաքում՝ շինարարական կազմակերպություններում:

-Համայնքի ղեկավար աշխատած տարիներին ի՞նչ կարևոր և մնայուն աշխատանքներ են կատարվել:

-Մինչև 1971 թվականը 3 գյուղեր միավորված էին, առանձնանալուց հետո միայն կազմավորվեց այս գյուղի կոլտնտեսությունը: Այդ տարիներին գյուղում չկար խմելու ջուր, բացակայում էր փողոցների լուսավորությունը, համայնքը գազաֆիկացված չէր, ճանապարհները քանդված վիճակում էին: Այսօր արդեն, ժողովրդի հետ մեջք մեջքի տալով՝ և գազ ունենք, և խմելու ջուր. ոռոգման ջրի հետ կապված, ստորգետնյա ջրերի իջեցման պատճառով, մի փոքր նեղություն ենք կրում, սակայն ուղիներ ենք գտնում, և ոռոգման հարցը մեր ուժերով կազմակերպում: Քարուքանդ եղած գյուղապետարանի շենքը հիմնովին վերանորոգել ենք: Խմելու ջրի խնդիր ունենք, հուսով ենք ժամանակի ընթացքում կլուծենք նաև այդ հարցը:

-Ի՞նչ կրթամշակութային հաստատություններ են գործում համայնքում՝ բնակչության ազատ ժանակը կազմակերպելու համար:

-Համայնքում գործող դպրոցը միակն է, չունենք մանկապարտեզ և որևէ այլ կրթօջախ: Դպրոցում սովորող շուրջ 160 աշակերտների դասերը կազմակերպվում են ընդամենը 5 դասասենյակներում: Դպրոցը գտնվում է վթարային վիճակում: 1988 թ. կառավարության կողմից հատկացվեց 2,5 հա տարածք, սկսեցինք նոր դպրոցի շինարարության աշխատանքները, հիմքը կառուցվեց, շինանյութն ամբողջովին ձեռք բերեցինք, սակայն շինարարությունը դադարեցվեց: Եթե դպրոցի կառուցման հարցը լուծվի, կունենանք և մարզադահլիճ, և մարզահրապարակ: Քննարկման փուլում է նաև ներկայիս դպրոցը մանկապարտեզ դարձնելու խնդիրը: Այսօր պատրաստ ենք որևէ ծրագրով 10 %-ի չափով ներդրում կատարել՝ նոր դպրոց ունենալու համար:

- Ի՞նչ կցանկանայիք ավելացնել:

- Համայնքում բերքի իրացման խնդիր կա: Մարդիկ մշակում են, բայց արդյունք չեն ստանում: Միշտ էլ ցանկալի է, որ ժողովրդի աճեցրած բերքն ու բարիքը մթերվում է վերամշակող ընկերությունների կողմից: Ակնկալիքները շատ են հատկապես գյուղատնտեսության զարգացման համար, նամանավանդ, որ հնարավորություններն այսօր մեծ են՝ եվրասիական շուկա դուրս գալու համար:

Մանվել Կիրակոսյան

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐԳԵՐԸ ՀԱՄ ՈՒՆԵՆ, ԾԱՂԻԿՆԵՐԸ՝ ԲՈՒՅՐ

Լիբանանահայ Քերոլայն Զաքարյանը, երկար տարիներ բնակվելով ԱՄՆ-ում, ի վերջո հանգրվանել է հայրենիքում: Կոտայքի մարզի Գեղադիր համայնքում գնելով անմշակ հողատարածքներ, ինչպես նաև շինություններ՝ ամուսնու հետ համատեղ, հիմնել է ֆերմերային տնտեսություն, որտեղ արտադրում են էկոլոգիապես մաքուր սննդամթերք՝ աշխատանքով ապահովելով գյուղի տասը ընտանիքի:

«Սկզբում նպատակ չունեինք ընդարձակել հողատարածքները, պարզապես բնակվում էինք այս գյուղում: Բարեգործություն կատարելու նպատակով, 15 տարի առաջ, գնեցինք առաջին հողատարածքը: Դժվար տարիներ էին, որոշ գյուղացիներ վաճառում էին իրենց տունը, տնամերձը: Մենք էլ, ելնելով իրավիճակից, գնում էինք սովորականից ավելի բարձր գնով»,- պատմում է տիկին Քերոլայնը: Այնուհետև, գյուղացիներին աշխատանքով ապահովելու նպատակով, սկսում են մշակել հողատարածքները, այգիներ հիմնել: Ստացված բերքից պահածոներ, չրեր էին պատրաստում, սկզբնական շրջանում՝ ընտանիքի պահանջարկը բավարարելու նպատակով: Տարիների ընթացքում, այգետարածքների և մշակվող հողատարածքների ընդարձակմանը զուգընթաց, ավելացան թե՛ ստացվող բերքի, և թե՛ վերամշակումից պատրաստված արտադրանքի ծավալները: «Քանի որ կային շենքային պայմանները (գնված բոլոր շինությունները նորոգել էինք), ստեղծեցինք հանգստի գոտի՝ միաժամանակ ձևափոխելով շինությունները՝ ապահովվեցինք հյուրատանն անհրաժեշտ պայմաններ: Սկզբնական շրջանում ներկայիս ծավալի մասին չէինք մտածում, սակայն հետագայում, քանի որ մեծ ներդրումներ էինք կատարում, առաջ եկավ գործարարությունն ընդլայնելու խնդիրը»,- հիշում է տիկին Քերոլայնը: Այդպիսով՝ ձևավորվեց «Էկո Վիլիջ Ռիզորթ» ՍՊԸ-ն, իսկ հարմարավետ հանգստի գոտին ստացավ «ՀայԼանդզ» անվանումը: Քերոլայն Զաքարյանը ստանձնեց տնօրենի պարտականությունը: Նրա կարծիքով այցելուներին գոհացնելու ամենակարևոր պայմաններից մեկը բարձրորակ սննդամթերքի առկայությունն է, որն ապահովելու համար ստեղծեցին նաև անասնապահական ֆերմերային տնտեսություն, որտեղ բուծվում են խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ, հավեր և հնդկահավեր, զբաղվում են նաև մեղվաբուծությամբ: Հայկական հին ավանդական խնոցու միջոցով ստանում են գյուղական կարագ և թան: Կաթից պատրաստում են տարբեր կաթնամթերքներ, որոնցից իր յուրահատուկ համով և պատրաստման տեխնոլոգիայով, առանձնանում է այծի պանիրը: Սեփական հողատարածքներից են ստացվում թե՛ միրգը, և թե՛ բանջարեղենը, որոնց արտադրության մեջ չեն օգտագործվում թունաքիմիկատներ և պարարտանյութեր: Արդյունքում, օրգանական եղանակով աճեցված միրգ ու բանջարեղենից պատրաստում են հայկական ավանդական խոհանոցի լավագույն ուտեստներ, ճաշատեսակներ ու քաղցրավենիքներ, հաճելի համ ու հոտով աղցաններ, հյութեր, կոմպոտներ, չրեր, ինչպես նաև լիբանանյան խոհանոցի ավանդական հանրահայտ սննդատեսակներ:

Հետագայում լավաշի թխման նպատակով կառուցեցին թոնրատուն: «Հայաստանում ԱՄՆ-ի համեմատությամբ, ավելի որակյալ գյուղմթերք է արտադրվում: Հայաստանի մրգերը համ ունեն, ծաղիկները՝ բույր: Ամեն ինչ բնական է, համեղ կարողանում ես բնապահպանորեն մաքուր սննդամթերք ստանալ»,- եզրահանգում է տիկին Քերոլայնը: Ի դեպ, նա իր գործունեությամբ ոգևորել է նաև գյուղի կանանց, ովքեր միրգը, բանջարեղենն ու գյուղմթերքները գնում էին շուկաներից ու խանութներից: «Գյուղի կանայք մի օր ինձ հյուր եկան և տեսան, որ տոմատի մածուկ եմ պատրաստում: Հետաքրքրվեցին, թե ինչու՞ այն չեմ գնում խանութից: Ես ժպտալով ասացի, որ եթե հողատարածք ունես, ինչու՞ չցանես, և եթե լոլիկ ես ստացել, ինչու՞ չպահածոյացնես կամ չվերածես չրի: Կանայք տեսնելով, որ ես ունենալով ֆինանսական միջոցներ, կարող էի այդ ամենը գնել խանութներից, սակայն աշխատելով իմ տնտեսությունում, իմ ձեռքով եմ պատրաստում անհրաժեշտ սննդամթերքը, իրենք էլ սկսեցին մշակել իրենց հողատարածքները, բերք ու բարիք ստանալ, վերամշակել»,- հպարտությամբ պատմում է տիկին Քերոլայնը:

Այցելուները հիմնականում երևանաբնակներ են, գալիս են նաև արտերկրյա զբոսաշրջիկներ: Երեխաների համար կառուցել են խաղահրապարակ, միջոցառումների անցկացման նպատակով՝ դահլիճ: «Ամեն ինչ անում ենք՝ գյուղի և Հայաստանում զբոսաշրջության զարգացման համար: Սակայն շատ ծրագրեր այսօր չենք կարողանում իրականացնել՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով: Կուզենայինք համագործակցել գյուղատնտեսության զարգացմանն աջակցող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ»,- իր խոհերն է կիսում կին գործարարը, ապա հավելում, որ հայրենիքն իրենց և, շատերի համար, բնակվելու ամենաապահով վայրն է:

Քերոլայն Զաքարյանը Հայաստանի Երիտասարդ Կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) և ՀՀ Կին Ձեռներեցների ցանցի անդամ է: Իր հայրենանվեր գործունեությամբ նա ոգևորում է նաև գործարար կանանց՝ սկիզբ դնելով նոր մտահղացումների ու ծրագրերի:

Նելլի Սահակյան

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 4 - 15, 2016 թ.
թիվ 5 (2093)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՈՐՈՃՈՂՆԵՐԻ ՈՐՈՇ ՃԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Որոճողների ճիճվային (հելմինթոզներ) հիվանդություններն այսօր մեծ տարածում ունեն մեր հանրապետությունում և յուրաքանչյուր տարի զգալի վնաս են պատճառում անասնապահությանը: Հետևաբար, որոճողների ճիճվային հիվանդությունները կանխարգելելու նպատակով, ֆերմերներին խորհուրդ է տրվում կատարելու հետևյալ միջոցառումները. Ճիճվային հիվանդություններից՝ տրեմատոդոզների, (ֆասցելյոզներ, դիկրոցելյոզ, պարամֆիստոմատոզներ) նկատմամբ անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը:

➢ Գարնանը, արոտավայր տանելուց մեկ ամիս առաջ, ամբողջ գլխաքանակը ճիճվաթափում են: Ներկայումս անասնաբուժական դեղատներում առկա են Ալբեն, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և այլ դեղամիջոցներ, որոնցով ցանկալի է ճիճվաթափության ենթարկել տվյալ տարածքում գտնվող բոլոր կենդանիներին: Գոմաղբն անհրաժեշտ է հավաքել և ենթարկել կենսաջերմային մշակման:

➢ Արոտային սեզոնում, արոտավայրերը փոխում են 2-2,5 ամիսը մեկ անգամ, իսկ եթե հնարավոր չէ, ապա ողջ արոտային շրջանում՝ գոնե մեկ անգամ:

➢ Արգելվում է կենդանիներին հանել արոտի՝ գետափնյա, լճափնյա և ճահճոտ վայրերում կամ կերակրել այդ վայրերից հավաքված խոտով:

➢ Արգելվում է կենդանիներին ջրել անհոսք ջրամբարների ջրով:

➢ Անհրաժեշտ է արոտավայրերում կտրել թփուտները, հավաքել քարերը: Որոճողների առավել տարածված ցեստոդոզների (մոնիեզիոզներ, թիզանեզիոզ, ավիտելինոզ և այլն) նկատմամբ պայքարելու նպատակով, խորհուրդ է տրվում կատարել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

➢ Արգելվում է վաղ գարնանը ոչխարներին կերակրել անասնաշենքերին կից տարածքներում աճող թարմ խոտով: Դրանք անհրաժեշտ է տարեկան 1-2 անգամ վարել և ցանել մշակովի խոտաբույսեր:

➢ Վաղ գարնանը, ընթացիկ տարում ծնված հորթերին, առաջին անգամ ճիճվաթափում են արոտավայր տեղափոխելուց 35-40 և երկրորդ անգամ՝ առաջին ճիճվաթափությունից 35-40 օր անց: Մեկ տարեկանից բարձր տարիք ունեցող հորթերին ճիճվաթափում են մեկ անգամ՝ արոտավայր քշելուց 35-40 օր անց:

➢ Գառներին ճիճվաթափում են արոտ քշելուց 14-16 օր անց, երկրորդ անգամ՝ առաջինից 15-20 օր անց և երրորդ անգամ՝ երկրորդից 25-30 օր անց: Մեծահասակ ոչխարներին ճիճվաթափում են հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին:

➢ Ցանկալի է մեկ անգամ ևս ճիճվաթափել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

➢ ճիճվաթափության նպատակով օգտագործում են տրեմատոդոզների ժամանակ առաջարկվող ճիճվամուղ դեղամիջոցները (Ալբեն, Ալբենոլ, Բենդազ, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և այլն):

Որոճողների աղիքային ստրոնգիլյատոզների (հեմոնխոզ, նեմատոդիրոզ, բունոստոմոզ, խաբերթիոզ և այլն) նկատմամբ կատարում են հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

➢ Տավարին առաջին անգամ ճիճվաթափում են ապրիլ-մայիս ամիսներին, երկրորդ անգամ՝ հուլիսին և երրորդ անգամ՝ օգոստոսին:

➢ Նույն տարում ծնված գառներին առաջին անգամ ճիճվաթափում են հուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբին, երկրորդ անգամ՝ մսուրային պահվածքին անցնելուց հետո:

➢ Մատղաշներին և մեծահասակ ոչխարներին առաջին անգամ ճիճվաթափում են գարնանը՝ արոտավայր տեղափոխելուց առաջ և երկրորդ անգամ՝ մսուրային պահվածքի անցնելու ժամանակ:

➢ Աղիքային ստոնգիլյատոզների նկատմամբ խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ ճիճվամուղ դեղամիջոցները՝ Ալբեն, Ալբենոլ, Բենդազ, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և հատկապես՝ կլոր ճիճուների համար նախատեսված՝ Լևա-200, Ռոլենոլ, Իվերմեկտին և այլ պատրաստուկներով:

➢ Բացի ճիճվաթափությունից, արոտային ողջ սեզոնի ընթացքում, արոտավայրերն անհրաժեշտ է փոխել 5-7 օրը մեկ անգամ, իսկ կենդանիների ջրումը կազմակերպել խմելու կամ հոսող գետերի ջրով: Որոճողների շնչառական օրգանների ստրոնգիլյատոզների (դիկտիոկաուլյոզներ, մյուլլերիոզ, ցիստոկաուլյոզ և այլն) նկատմամբ խորհուրդ է տրվում կատարել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

➢ Նույն տարում կամ աշնանը ծնված հորթերին առաջին անգամ ճիճվաթափում են գարնանը՝ արոտավայր տեղափոխելուց 45-50 օր անց, և այսպես՝ 15-20 օրը մեկ անգամ, կենդանիներին պարբերաբար ճիճվաթափում են, մինչև արոտային շրջանի ավարտը:

➢ Ոչխարներին առաջին անգամ ճիճվաթափում են արոտավայր քշելուց 20 օր առաջ, երկրորդ անգամ՝ ամռանը և երրորդ անգամ մսուրային պահվածքին անցնելուց:

➢ Արոտային պահվածքի ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար փոխել արոտավայրերը:

➢ Արոտավայրերում մատղաշներին անհրաժեշտ է պահել բարձր տարիք ունեցող կենդանիներից առանձին:

➢ Կենդանիներին անհրաժեշտ է ջրել խմելու կամ էլ ապահով վայրերից բերված ջրով:

➢ Շնչառական օրգանների ստրոնգիլյատոզներով հիվանդ կենդանիներին խորհուրդ է տրվում ճիճվաթափել (Ալբեն, Ալբենոլ, Բենդազ, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և հատկապես՝ կլոր ճիճուների համար նախատեսված՝ Լևա-200, Ռոլենոլ, Իվերմեկտին և այլ պատրաստուկներով):

Վերը նշված կարգով կանխարգելիչ միջոցառումների կատարումը կկանխի որոճողների ճիճվային հիվանդություններով վարակումը և դրանց հետագա տարածումը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱՂԱՇՅԱՆ
ՀԱԱՀ, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՐՍԱԿԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարսակը պատկանում է դաշտավլուկազգիների կամ հացազգիների ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղին: Արմատը փնջաձև է: Ցողունը կանգուն, հանգուցավոր ծղոտ է, բարձրությունը՝ 60-120 սմ, տերևները նշտարաձև են, ծաղկում է մայիս-հունիս ամիսներին: Հատիկի մակերեսը ծածկված է երկար, բարակ, միմյանց սեղմված մազմզուկներով: Հատիկն ունի ակոսիկ տեսք: Հանդիպում է Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի, Սյունիքի և այլ մարզերում: Աճում է ճամփեզրերին, թփուտներում, դաշտերում, աղբոտ վայրերում և որպես մոլախոտ՝ ցանքերում: Մշակության մեջ տարածված է վարսակ ցանովի տեսակը: Վարսակն ունի 33 տեսակ, այդ թվում՝ 2 հիբրիդային: Օգտակար նյութերի բազմազանությունը, դրանց բավարար քանակությունը և համաչափությունը թույլ են տալիս բազմաթիվ հիվանդությունների դեպքում օգտագործել վարսակի հատիկը, օսլան, փաթիլները, նաև՝ որպես դիետիկ, կազդուրող սննդամթերք՝ մաշկային հիվանդությունների բուժման համար:

Բուժիչ հատկություններ ունի նաև խոտը և հատիկի թեփը: Արտադրվում է վարսակի դեղատնային ոգեթուրմ, որն ունի հանգստացնող հատկություն: Վարսակի հատիկի կալորիականությունը 370 կկալ է, փաթիլներինը՝ 305 կկալ, եփված վիճակում զգալիորեն ավելի քիչ՝ 55 կկալ: Այս ցուցանիշով հում վարսակը քիչ է տարբերվում մյուս հատիկավոր բույսերից, սակայն եփված վիճակում զգալիորեն զիջում է բրնձին (105 կկալ) և եգիպտացորենին (90): Պարունակում է 11-18 տոկոս սպիտակուց: Ամինաթթուների բաղադրությամբ առավել մոտ է մարդու մկանների սպիտակուցին: Պարունակում է մարդու օրգանիզմում չսինթեզվող ամինաթթուներ՝ լիզին և տրիպտոֆան, շատ կարևոր է, որ ի տարբերություն ցորենի, գարու, աշորայի (տարեկան)՝ չի պարունակում «ալերգածին» (ցելիակիա) գլյուտեն: Ճարպերի պարունակությամբ՝ 4-6,5 տոկոս, գերազանցում է այլ հացահատիկներին: Վարսակում պարունակվող օսլան (40-60 տոկոս) շաքարի մակարդակը արյան մեջ կտրուկ չի բարձրացնում, քանի որ դանդաղ է յուրացվում՝ ապահովելով օրգանիզմը գլյուկոզայով և գլիկոգենով:

Շատ քիչ թվով մթերքներ՝ իրենց օգտակար հատկությունների ծավալով, կարող են մրցել վարսակի հետ: Գիտական հետազոտությունները վկայում են, որ վարսակն օժտված է առողջարար ֆունկցիաների աներևակայելի հավաքածուներով: Այն կարգավորում է նյութափոխանակությունը, բարերար ազդեցություն է գործում սրտի վրա և կանոնավոր օգտագործման դեպքում օգնում է ազատվել ավելորդ քաշից:

Վարսակը նաև էներգիայի աղբյուր է, որն արժե ընդգրկել ամենօրյա սննդակարգում:

ՎԱՐՍԱԿՆ ՕԳՆՈՒՄ Է

1. Իջեցնել արյան մեջ խոլեստերինի մակարդակը և հոգալ սրտի մասին

Հարկավոր է պարզապես ամեն առավոտ՝ քաղցած ժամանակ, խմել վարսակի եփուկ: Վարսակը հարուստ է ճարպոտ օմեգա-6 ամինաթթուներով և լինոլաթթվով, որոնք օրգանիզմին «ճիշտ» ճարպերով են ապահովում և թույլ են տալիս նվազեցնել «վատ» խոլեստերինի մակարդակը՝ պաշտպանելով սրտային հիվանդություններից:

2. Պակասեցնել կալորիաների թիվը

Վարսակի մեջ շատ քիչ կալորիաներ կան, սակայն այն շատ սննդարար մթերք է: Այն պարունակում է ճարպեր, բջջանյութ, հանքանյութեր, օլիգոէլեմենտներ: Այդ պատճառով էլ այն գերազանց դիետիկ մթերք է համարվում:

3. Մաքրել օրգանիզմը

Վարսակի բաղադրության մեջ եղած ամինաթթուների գործածումը թույլ է տալիս լյարդին լեցիտին արտադրել: Վերջինս անհրաժեշտ է դետոքսիկացիայի և օրգանիզմը մաքրելու համար: Բջջանյութով հարուստ վարսակ օգտագործելով՝ մենք մեր անոթների պատերը մաքրում ենք ճարպային նստվածքներից և խոլեստերինից:

4. Վերահսկել արյան մեջ շաքարի մակարդակը

Վարսակ խորհուրդ են տալիս նաև այն մարդկանց, ովքեր տառապում են դիաբետից: Օգտակար բուսական մանրաթելերը կարգավորում են մարսողությունը, նպաստում օսլայի յուրացմանը՝ ապահովելով արյան մեջ գլյուկոզայի մակարդակը:

5. Պաշտպանվել քաղցկեղից

Բազմաթիվ հետազոտություններ ապացուցում են, որ վարսակի մեջ եղած որոշակի ֆիտոքիմիական նյութեր մեզ կարող են պաշտպանել քաղցկեղի զարգացման ռիսկից: Այդ պատճառով էլ ամեն օր վարսակ գործածելու կարևորությունն ակնհայտ է:

6. Բարելավել մարսողությունը

Վարսակն իջեցնում է լեղաթթվի մակարդակը՝ դյուրացնելով աղեստամոքսային համակարգում սննդի անցանելիությունը և կանխելով աղիների խցանումները:

Վարսակը պարունակում է նաև «դանդաղ» ածխաջրեր, որոնք, օրգանիզմի կողմից յուրացվելով՝ երկար ժամանակով չեզոքացնում են քաղցի զգացումը:

Վարսակի եփուկը կամ թուրմը վիտամիններից, հանքանյութերից և բջջանյութից բաղկացած իսկական փունջ է: Այն հագեցվածության զգացում է հաղորդում և մեզ ազատում շատ ուտելու անհրաժեշտությունից: Օրգանիզմը հագեցնելով օգտակար նյութերով՝ մենք կանոնավոր և հաստատուն կերպով քաշ ենք կորցնում:

Վարսակն օրգանիզմից դուրս է բերում տոքսինները: Այդ պատճառով էլ էներգիայի հորդում ենք զգում և վիտամինների, պրոտեինների, հանքանյութերի և օլիգոէլեմենտների շնորհիվ, նկատում կատարվող դրական փոփոխությունները:

Բացի դրանից, վարսակի եփուկը թույլ չի տալիս, որպեսզի ավելորդ հեղուկը մնա օրգանիզմում, ինչն էլ նպաստում է այտուցներից խուսափելուն:

Լիլիթ Գասպարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



«Սյունիք-Զարգացում» ՀԿ-ի կողմից իրականացվող Համայնքային Զարգացման ծրագրի շրջանակներում, Վայոց ձորի մարզի Գեղափ համայնքում գործող փնկարանային փնտեսությունը մատչելի գներով առաջարկում է բարձրորակ պտղատու տնկիներ (ընկույզ, փանձ, խնձոր, ծիրան, սերկևիլ, դեղձ, սալոր, բալ, կեռաս):

Վերապատրաստված մասնագետների կողմից գնորդներին տրամադրվում է նաև այգու մշակության վերաբերյալ տեղեկատվական նյութեր և խորհրդատվություն:

Դիմել Արամ Հակոբյանին:

Հեռ.՝ 093-46-21-93:

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել ***011 23 14 30*** հեռախոսահամարով:



Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ ***«Նոյան Տապան» և «Բուկինիստ»*** գրատներում:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գարնանը բոլորին անհանգստացնում է վիտամինային անբավարարության նկատմամբ մտավախությունը, որի պատճառով մարդիկ շտապում են դեղատուն՝ գնելու վիտամինների ու հանքային նյութերի հերթական հաբերը: Վաղուց ժամանակն է անցնելու գարնանային մթերքներով ճաշացանկի: Գարնանը մեր օրգանիզմը փոփոխությունների կարիք ունի. պետք չէ նրան առաջարկել այն, ինչ մեկ ամիս առաջ: Սննդաբանները խորհուրդ են տալիս հանել ճաշացանկից այն ամենը, ինչի կարիքն օրգանիզմն ունի հատկապես ձմռանը: Օրինակ՝ ամեն տեսակ խավարտների փոխարեն, օգտագործեք ավելի շատ բանջարեղենով աղցաններ: Գարնանն առավել առողջարար է ծանր կերակուրներից հրաժարվելը: Ճաշացանկում հնարավորինս քչացրեք յուղոտ մսեղենի, կենդանական յուղի ու շաքարի քանակությունը: Օգտագործեք ցածր յուղայնությամբ կաթնամթերք. այն նաև օրգանիզմը մաքրող հատկություն ունի: Աշխատեք ավելի քիչ օգտագործել նաև տարաբնույթ աղեր, կծու և թթու համեմունքներ: Դրանք փոխարինեք թարմ կանաչեղենով: Պետք է խուսափել այն մրգերից ու բանջարեղեններից, որոնք կարող են ալերգիկ ռեակցիաներ առաջացնել: Խորհուրդ է տրվում օգտագործել Ձեր բնակավայրին բնորոշ մրգեր և բանջարեղեն, այսինքն՝ տեղական, այն նվազեցնում է ալերգիկ ռեակցիաների ռիսկը: Օրգանիզմի համար խիստ կարևոր վիտամինների և միկրոտարրերի պահանջը կարելի է լրացնել բնության բարիքների՝ վաղ գարնանային թարմ, էկոլոգիապես մաքուր ուտելի խոտաբույսերի, բանջարեղենի, մրգերի միջոցով: Վաղ գարնանային տերևային բանջարեղեններից՝ թարխունի, կոտեմի, հազարի, կանաչ սոխի օգտակարության մասին ներկայացնում ենք ստորև:

Կանաչ սոխ

Գիտնականները սոխի հայրենիքը համարում են Իրանը և Աֆղանստանը: Կանաչ սոխը (կամ այլ կերպ՝ աղցանային սոխ) աճեցրել են դեռևս հազարամյակներ առաջ: Սոխի բուժիչ հատկությունների մասին գիտեին շատ ազգեր. հին հռոմեացիները նույնիսկ համարում էին, որ սոխը զինվորներին ուժ և կորով է տալիս, այդ իսկ պատճառով էլ այն ընդգրկում էին նրանց սննդակարգում: Կանաչ սոխը չափազանց հարուստ է հանքային տարրերով և վիտամիններով: Գիտնականները նկատել են, որ ջերմատների աշխատողները, որոնք զբաղվում են կանաչ սոխի մշակմամբ, գրեթե չեն հիվանդանում վարակիչ, մրսածության հետ կապված հիվանդություններով: Վիտամին C-ն պահպանելու նպատակով, ցանկալի է կանաչ սոխը մատուցել առանց կտրատելու և առանց ջերմային մշակման: Իսկ վաղ գարնանը, այդ վիտամինի նկատմամբ օրգանիզմի պահանջը բավարարելու նպատակով, բավական է օրվա ընթացքում ուտել 100-150 գ կանաչ սոխ: Սոխի մեջ կան նաև զգալի քանակությամբ ֆիտոնցիդներ, որոնք նպաստում են ախտածին միկրոօրգանիզմների ոչնչացմանը:

Ամենօրյա սննդակարգում թարմ կանաչ սոխի օգտագործումը նպաստում է օրգանիզմում աղաջրային փոխանակության կանոնավորմանը: Գիտական ժամանակակից բուսաբուժության մեջ սոխի պատրաստուկները հաջողությամբ օգտագործվում են վիտամինային անբավարարության, վերին շնչուղիների և աղիների հիվանդությունների ժամանակ:

Կոտեմ

Որպես սննդային և դեղագործական նշանակության բույս՝ կոտեմը հայտնի է եղել դեռևս Հին Եգիպտոսում, Հունաստանում, Հռոմում: Բույսի սերմերից և տերևներից պատրաստված քսուքը՝ ճարպի հետ միասին, օգտագործվել է ալերգիաների, քոսի, ինչպես նաև վերքերի բուժման նպատակով: Կոտեմը նպաստում է մարսողությանը, ախորժակի լավացմանը, արյան ճնշման կարգավորմանը: Թարմ տերևները հարուստ են հանքային նյութերով՝ K, Ca, P, Mg, Cu և այլն: Պարունակում է C, B խմբի վիտամիններ, կարոտիններ, ռուտին, ռիբոֆլավին, մանանեխի եթերային յուղ. դալար ընձյուղները և թարմ տերևներն ունեն բողկ և ծովաբողկ հիշեցնող բարկ, դառը, կծու համ:

Թարխուն

Սննդի մեջ օգտագործում են թարխունի երիտասարդ ցողունն ու տերևները, որոնք հավաքում են մինչև բույսի ծաղկելը: Օգտագործում են ինչպես թարմ, այնպես էլ՝ չորացրած վիճակում: Թարխունը լայնորեն օգտագործվում է արաբական և կովկասյան խոհանոցներում: Օրինակ՝ հայերը կարծում են, որ ձկնեղենն առանց թարխունի դժվար է պատկերացնել: Թարխունի եթերայուղից ստացվող քացախն օգտագործում են պահածոների մեջ, մսից, ձկից, բանջարեղենից, պանրից պատրաստվող ուտեստներում: Թարխունն օգտակար է նաև զովացուցիչ ըմպելիքների և լիկյորների պատրաստման համար: Թարխունն ունի ախորժաբեր, հակաճիճվային, թեթև միզամուղ և անոթներն ամրացնող, մարսողությունը բարելավող և ստամոքսահյութի արտադրությունը խթանող հատկություն:

Հազար

Հազար աճեցրել են հին հույները, հռոմեացիները, եգիպտացիները, որտեղից էլ այն տարածվել է այլ երկրներում: Հայտնի են հազարի շատ տեսակներ, որոնք նույնիսկ տարբերվում են ձևով, չափով և տերևների գույնով: Հազարի տերևները պարունակում են մեծ քանակությամբ C վիտամին և կարոտիններ: Ընդ որում, ստորին տերևներում C վիտամինն ավելին է, քան՝ արտաքին տերևներում, իսկ կարոտինի քանակը՝ ընդհակառակը, արտաքին տերևներում 30 անգամ ավելի շատ է, հետևաբար, սննդի մեջ պետք է օգտագործել նաև արտաքին կանաչ տերևները: Ունենալով նման քիմիական կազմ՝ հազարի կալորիականությունն այնուամենայնիվ ցածր է: Որպես բջջանյութի լավագույն աղբյուր՝ հազարը խորհուրդ է տրվում մարսողական խանգարումների, շաքարային դիաբետի, ճարպակալման և աթերոսկլերոզի ժամանակ:

ՍԿՍՎԵԼ Է 2016 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ

1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր

1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ստուդիա» կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ.ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 11
ստորագրված է տպագրության 14.03.2016 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա